ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2018թվական N 30-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018թ. ԹԻՎ-5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարմանմասին >> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով , համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Թալին համայնքի ավագանու 2018թվականի հուլիսի 30-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը հետևյալ տեսքով՝

1)Թալին համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին

2)Թալին համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին :

3)Թալին համայնքի ավագանու 12.08.2016թ. <<Թալինի համայնքապետարանի խնբամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին >> N 36-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին :

4)Թալին համայնքի ավագանու 12.08.2016թ. <<Թալին համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների քանակը , անվանումը և կազմը հաստատելու մասին >> N-26-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին :

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ – 0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4.Գրիգորյան Աշոտ

5.Գևորգյան Թամարա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին

30 հուլիսի 2018թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2018թվական N 31-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով , 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով , 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով , հիմք ընդունելով ՀՀ կառավարության 14.05.2001թ. <<Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի նմշակման , փորձաքննության , համաձայնեցման , հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին >> թիվ 408 որոշումը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Թալին համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը , համաձայն հավելվածի :

2,Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ – 0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4.Գրիգորյան Աշոտ

5.Գևորգյան Թամարա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին

30 հուլիսի 2018թ

Հավելված
Թալին համայնքի ավագանու
2018թ. հուլիսի 30-ի 31-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Թալին համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ (Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

Քաղաքում հիմնական կառուցապատումը սկսվել է 1925-ական թվականներին՝ 2-3 հարկայնությամբ տիպային շենքեր: Շենքերը կառուցվել են կրող պատերի սկզբմունքով, ինչով և պայմանավորված է դրանցում պատուհանների և բացվածքների փոքր չափերը: Հիմնական շինանյութ է հանդիսացել տուֆը և բազալտը:
1980-ական թվականներին սկսվել է միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով տիպային բազմաբնակարան շենքերի շինարարությունը: Միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով կառուցման եղանակը հնարավորություն է ստեղծել իրականացնելու ավելի մեծ պատուհանների բացվածքներ Համայնքի տարածքում կառուցված հասարակական և վարչական շենքերի հիմնական մասը կառուցվել է նմանատիպ տեխնոլոգիայով:

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1 Թալինը հնում մտել է Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի մեջ: Հնագիտական պեղումներից պարզվում է, որ Թալինը բնակելի է եղել մ.թ.ա. 2-րդ հազարամյակում, իսկ ըստ Թովմա Արծրունու«Պատմության», Թալինը հիմնադրել է Անանիոս Բագրատունի իշխանի կողմից 9-10-րդ դարերում: Այն Թալինա անունով հիշատակվում է Պտղոմեոսի կողմից՝ 2-րդ դար:

Սկսած 7-րդ դարից հաճախ հիշատակվում է, երբեմն որպես գյուղ, երբեմն էլ որպես ավան կամ քաղաք: Քաղաքում կառուցված է Սբ. Աստվածածին կամ Փոքր եկեղեցին, որը

կառուցվել է 689 թվականին Ներսեհ պատրիկ Կամսարական իշխանի կողմից: Քաղաքի հարավ գտնվում է միջնադարյան քարավանատունը, բերդը: Ըստ ուսումնասիրությունների բերդը կառուցվել է 7-րդ դարում կամսարական նախարարական տոհմի ներկայացուցիչների կողմից: Բերդի նշանակությունը մեծ է եղել 16-րդ դարից սկսած, երբ թուրք-պարսկական պատերազմների ժամանակ այն արևմուտքից պաշտպանել է Երևանի մատույցները:

ԹԱԼԻՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ

Վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության եզակի հուշարձաններից է: Գտնվում է Թալին քաղաքի հյուսիսային մասում: Համալիրը բաղկացած է Կաթողիկե և բազիլիկ եկեղեցիներից, պալատական կառույցից և գերեզմանոցից:

Կաթողիկե եկեղեցի (կամ Թալինի մեծ տաճար): Կառուցումը վերագրվում է Կամսարական իշխաններին: Տաճարի մասին պատմական, վիմագրական տեղեկություններ չեն պահպանվել: Ըստ ճարտարապետական առանձնահատկությունների վերլուծության, Կաթողիկեն թվագրվում է VII դ.: Եռանավ, գմբեթավոր, արևմուտքից արևելք ձգված, խաչաձև հատակագծով, եռախորան բազիլիկ կառույց է: Խորանները արտաքուստ հնգանիստ են: Ավագ խորանի հյուսիսային և հարավային կողմերում կառուցված են ավանդատներ, որոնց վերին հարկերը ծառայել են որպես գաղտնարաններ: Աղոթասրահը երկու շարք մույթերի և որմնամույթերի միջոցով բաժանված է կենտրոնական՝ բարձր ու լայն նավի և երկու կողային թաղածածկ նավերի: Անցումը գմբեթատակ քառակուսուց դեպի թմբուկը իրականացված է չորս առագաստների, իսկ թմբուկից դեպի գմբեթը՝ փոքր տրոմպների միջոցով: Ունի հինգ մուտք՝ մեկը արևմուտքից, երկուական՝ հյուսիսից և հարավից: Կառուցված է սև և կարմիր սրբատաշ տուֆ քարով: Կաթողիկեն առանձնանում է իր արտաքին հարուստ դեկորատիվ հարդարանքով՝ լուսամուտների քանդակազարդ պսակներով, քիվերով, արևմտյան ճակատի ինքնատիպ լուծումով: Տաճարի ներսում պահպանվել են որմնանկարչության մնացորդներ, որոնց պատվիրատուն Մովսես Եկեղեցապանն է, ինչի մասին վկայում է եկեղեցու ներսում պահպանված արձանագրությունը:

Կաթողիկեն վնասվել է 1840 թ. և 1931 թ. երկրաշարժերից: Նորոգման և ամրակայման աշխատանքներ իրականացվել են 1947 թ., 1970-1975 թթ.: Թալինի Կաթողիկեն իր հարուստ ու շքեղ արտաքին հարդարանքով առանձնանում է վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության՝ զուսպ լուծումներով հուշարձաններից:

Միանավ բազլիկ եկեղեցի

Հուշարձանի հիմքերը բացվել են Կաթողիկեի հյուսիսային խորանից մոտ 5 մ հեռավորության վրա, 1970-1975 թթ. մասնակի նորոգման ընթացքում: Արևելյան կողմում՝ խորանով, հավանաբար թաղածածկ կառույցի մնացորդներ են, որոնք թվագրվում են V դ.:

Պալատ

Գտնվել է Կաթողիկեից 150 մ հարավարևելք: Թվագրվում է IX-XI դդ.: Պահպանվել են որմնապատերի մնացորդները:

Ներսես Կամսարականի Սուրբ Աստվածածին եկեղեցի,

Հայկական եկեղեցի ճարտարապետական հուշարձան Հայաստանի Թալին քաշաքի հյուսիսային եզրին, Կաթողիկե եկեղեցուց ոչ հեռու: Ըստ արևմտյան պատի արձանագրության կոչվում է Սուրբ Աստվածածին, և 7-րդ

դարում կառուցել է Ներսեհ Պատրիկ Կամսարականը,այդ ատճառով է, որ շատ հաճախ եկեղեցին անվանում են Կամսարական եկեղեցի Պատկանում է խաչաձև-գմբեթավոր փոքր կառույցների այն ենթատիպին, որի արտաքուստ ուղղանկյուն խաչաթևերը ներսից կիսաշրջանաձև են (բացառությամբ արևմտյան թևի): Մուտքերը երկուսն են՝ արևմուտքից և հարավից: Հյուսիսային խաչաթևի արևմտյան պատին դրսից կա փոքր աբսիդ: Գմբեթային փոխանցումն իրականացված է տրոմպների միջոցով: Սրբատաշ, կարմրավուն տուֆից կառուցված եկեղեցու զուսպ հարդարանքից աչքի է ընկնում երկշարք, տամնաշար քիվը:

Եկեղեցու արևմտյան ճակատին փորագրված է. «Ես Ներսեհ Ապոհիպատ Պատրիկ Շիրակայ և Արշարունեաց շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյ Ածածնին ի բարեխաւսութիւն ինձ և Շուշանայ ամուսնոյ իմոյ և Հրահատայ որդւոյ մերոյ»:

Վերջին դարերին շրջակա միջավայրի ազդեցությունների և աղետների հետևանքով Կամսարական եկեղեցին ծանր վնասներ է կրել և 1998-ին վերանորոգվել է դուբայցի մի բարերաի օգնությամբ: Դիպվածով գնտել են կտուրի կղմինդրի բնօրինակը և այդպիսով հնարավոր է եղել վերակառուցել տանիքը:

Քարավանատուն

Միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ինքնատիպ կառույցներից մեծ արժեք են ներկայացնում քարավատները, որոնցից մեկի ավերակները գտնվում են Թալին քաղաքից դեպի Դվին-Անի տանող նախկին ճանապարհին: Բազմադահլիճ քարավատուն է վերակազմությունը տրվել է Վ. Հարությունյանի կողմից: Հուշարձանը այժմ ավերակ վիճակում է նրա ավերածության պատճառը ոչ թե ժամանակն է այլ մարդը: Այդ մասին նշում Թ.Թորամանյանը /Այս իջևանը քանդել է Շահրիարցի Օհան Սուլթանը, որը շարունակ այս իջևանի քարերը քանդելով ուղտերի վրա բարձած ուղարկում էր գյուղը՝ Շահրիար/: Հուշարձանը իրենից ներկայացնում է 24.0 x 24.0 մ չափերով քառակուսի բակի շուրջը դասավորված մի կառույց 73.0 x 73.0 մ ընդհանուր չափերով:

3.2 Թալին քաղաքի հուշարձանների ցանկը

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Կոթող	6-7 դդ.		Հ	եկեղեցու հս-ամ կողմում, վերին և ստորին մասերը՝ կոտրված	
Քաղաքատեղի Թալին	մ.թ.ա. 2-1 հզ. մջնդ	հս մասում	Հ	«Ջուլհակ» բլրի ստորոտին	

հուշարձան	կառուցման թվ.	գտնվելու վայր, հասցե	նշան.	նկարագրություն, նշումներ	պատկեր
Տապանաքար	874 թ.		Հ	եկղ-ուց 10 մ հվ-ամ, կոտրված՝ 6 մասի	
Ջրամբար	մ.թ.ա. I հզ, վաղ մջնդ		Հ	ամրոցից հս, Թալին-Մաստարա հին ճանապարհին, Մբ. Կաթողիկե եկեղեցուց 500 մ հս	
Ջրաղացների համալիր	19-20 դդ.	I կմ հս-աե	Տ	Արալըղի դաշտում, Կարմրաշեն տանող ճանապարհից աջ, պահպանված ջրաղացների թիվը մոտ 30 է	
Պալատ	9-11 դդ.		Հ	Կաթողիկեից 150 մ հվ-աե	
Մատուռ «Սանդուխտ կույս»	19 դ.	ամ եզրին	Տ	վրկնգ՝ 1991- 1992 թթ.՝ Ամիրբեկ Դերզյանի կողմից	
Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1979 թ.	հս մասում	Տ	բարձունքի վրա	
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1946 թ.	ք.մ.	Տ	քաղաքի սկզբնամասում, ճարտ.՝ Ռ. Իսրայելյան	
Կոթող	5-6 դդ.		Հ	եկեղեցու հս-ամ կողմում, խիստ քայքայված	
Կոթող	5-6 դդ.		Հ	եկեղեցու հվ կողմում, պահպանվել է միայն պատվանդանը	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Կոթող	4-5 դդ.		Հ	եկեղեցու հս-ամ կողմում	
Կոթող	4-7 դդ.		Հ	Կաթողիկեի հվ-աե կողմում	
Կոթող	4-7 դդ.		Հ	Կաթողիկեի հվ-աե կողմում, պահպանվել է պատվանդանը	
Կոթող	4-7 դդ.		Հ	Կաթողիկեի հվ-աե կողմում	
Կոթող	4-7 դդ.		Հ	Կաթողիկեի հվ-աե կողմում	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Կոթող	4-5 դդ.		Հ	Կաթողիկեի հվ կողմում	
Կոթող	4-5 դդ.		Հ	Կաթողիկեի հս կողմում, պահպանվել է պատվանդանը	
Կոթող	4-5 դդ.		Հ	Կաթողիկեից 30 մ հվ-ամ, պահպանվել է պատվանդանը	
Կաթողիկե	7 դ.		Հ		
Խաչքար	13-14 դդ.		Հ	Կաթողիկեի ամ կողմում, կանգնեցված գետնին	
Խաչքար	10 դ.		Հ	մատուռի ներսում	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Խաչքար	8-9 դդ.		Հ	մատուռի ներսում	
Խաչքար	8 դ.		Հ	մատուռի ներսում, Թալինի հանրահայտ կլոր խաչքարն է	
Խաչքար	7-8 դդ.		Հ	մատուռի ներսում	
Խաչքար	7-8 դդ.		Հ	մատուռի ներսում	

Հուշարձան	կառուցված	վայր, հասցե	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Խաչքար	19 դ.		S	ագուցված հվ ճակատին, արտաքուստ, մուտքից ձախ	
Խաչքար	13 դ.		Հ	ագուցված աե ճակատին, արտաքուստ	
Խաչքար	13 դ.		Հ	ագուցված հվ ճակատին, արտաքուստ, մուտքից աջ	
Խաչքար	10 դ.		Հ	ագուցված ամ ճակատին, արտաքուստ, մուտքից աջ	
Խաչքար	11դ.		Հ	Կաթողիկեի հս-ամ կողմում, ընկած գետնին	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Եկեղեցի	5 դ.		Հ	Կաթողիկեից հս, պահպանվել են միայն հիմնապատերը	
Կոթող	4-5 դդ.		Հ	Կաթողիկեի հվ կողմում	
Խաչքար	9-10 դդ.		Հ	Կաթողիկեից 35 մ հս-ամ, երկատված, ընկած գետնին	
Կոթող	4-7 դդ.		Հ	եկեղեցու հս կողմում, պահպանվել է միայն պատվանդանը	
Խաչքար	10-11 դդ.		Հ	արձանագիր, եկեղեցու խորանում	
Տապանաքար	9-10 դդ.		Հ	եկղ-ուց 10 մմ հվ-ամ, արձանագիր	
Քարավանատուն, Թալինի մեծ	13 դ.	հվ-ա՛ե եզրին	Հ	«Հայիր» վայրում, նախկինում սխալմամբ ներկայացվել է Դաշտադեմ գյուղով	
Եկեղեցի Սբ. Աստվածածին	613-615 թթ.	ք.մ.	Հ		



IV. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

4.1. Համայնքի տարածքում նոր շենքերի կառուցման ժամանակ խրախուսվում են հայկական դասական, հայկական մոդեռն և համաշխարհային ժամանակակից ճարտարապետական ոճի կիրառումը:

Բնակելի և հասարակական, ինչպես նաև արտադրական շենքերի միջև եղած հեռավորությունը պետք է ընդունել հիմնվելով արևի ճառագայթման քանակի (ինսոլյացիայի) և լուսավորվածության հաշվարկների վրա, ինչպես նաև հակահրդեհային պահանջներին համապատասխան:

2-3 հարկանի բնակելի շենքերի երկար կողմերի միջև հեռավորությունը (կենցաղ. խզումներ) պետք է ընդունել 15 մ-ից ոչ պակաս, իսկ 4 հարկանի շենքերի միջև 20 մ-ից պակաս: Այս շենքերի երկար կողմերի և բնակելի սենյակներից պատուհաններ ունեցող կողաճակատների միջև 15 մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորությունները կարող են կրճատվել ինսոլյացիայի և լուսավորության նորմերը պահպանելու դեպքում, եթե ապահովված է պատուհանից պատուհան բնակելի սենյակների անտեսանելիությունը:



Շենքերի տեղադրել քամիների գերակշիռ ուղղությունների հաշվառումով՝ կողաճակատներով դեպի վերջիններս:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

Նոր կառուցվող շենքերի և շինությունների նախագծման ժամանակ շենքերի մասշտաբը համապատասխանեցնել միջավայրի հետ:

Պատուհանների, դռների ինչպես նաև շքամուտքերի բացվածքներում ողջունվում է հայկական զարդաքանդակներով դեկորատիվ տարրերի կիրառումը:

Ելնելով բնակլիմայական պայմաններից և բազմամյա փորձից նպատակահարմար է լանջավոր տանիքների օգտագործումը (քառալանջ): Ողջունվում է բազմաֆունկցիոնալ, կանաչ տանիքների իրականացումը՝ խստությամբ պահպանելով կառուցման նորմատեխնիկական պահանջները:



- Լանջավոր տանիքների կիրառման դեպքում դրանց առավելագույն թեքությունը պետք է ընդունել - 0.5:
- Լանջավոր տանիքների գագաթի բարձրությունը պետք է սահմանափակվի կառույցի խորության կեսի չափով:

Շվաքարանների կառուցման ժամանակ հաշվի առնել միջավայրի ճարտարապետության հետ համատեղելիությունը, համաձայն աշխատանքային նախագծի և խստորեն պահպանելով ինսոլյացիայի նորմաները:

Շենքերի արտաքին երեսպատումն իրականացնելիս անհրաժեշտ է համապատասխանեցնել միջավայրի ճարտարապետական տեսքին, օգտագործելով տեղանքին բնորոշ բնական երեսպատման նյութեր՝ տուֆ, բազալտ, ֆելզիտ, մարմար, գրանիտ և այլն: Ելնելով քաղաքաշինական միջավայրից, հարակից շենքերի ճարտարապետական ձևերից կարելի է կիրառել արհեստական երեսպատման նյութեր՝ երանգավորումը համապատասխանեցնելով միջավայրին: Արտաքին լուսավորություն իրականացնել միայն հասարակական, մշակութային և վարչական շենքերի ճակատներում և շրջակայքում: Հատուկ դեպքերում նաև բնակելի շենքերում, բնակիչների համաձայնությամբ և պահպանելով լուսավորության նորմաները:

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

Համայնքի տարածքում ճանապարհային ծածկույթը իրականացնել ասֆալտբետոնից, առանձին դեպքերում հնարավոր է ծածկույթի իրականացումը բնական քարերով և երկաթբետոնե ծածկով:

III–րդ կարգի ճանապարհի երկու կողմից պահպանել չկառուցապատվող կանաչապատ շերտ՝ 12 մ լայնությամբ, սանպահպանման և կողային տեսանելիությունն ապահովելու համար՝ պարտադիր կանաչապատման պայմանով (ՀՀՇՆ IV-11.05.02-99, 5-11 կետ):



Խաչմերուկներում պահպանել տեսանելիության եռանկյունները, ապահովելով շրջադարձի նվազագույն շառավղերը եզրաքարի եզրով 5 մ-ից ոչ պակաս, հրապարակներում՝ 8մ-ից ոչ պակաս: Հեռավորությունները շենքերից և շինություններից ընդունել հԾՌկ II-60-75** կետ 10.20-ի համաձայն:



Ավտոտնակների համար հատակացվող հողամասի նվազագույն մակերեսը 20 ք.մ., բաց ավտոկանգառատեղերի համար՝ 25 ք.մ.:

Կանգառատեղերի համար խորացումները մայթի հաշվին իրականացնել միայն սիզամարգերի և առանձին ծառախմբերի հաշվին՝ տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ թույլտվությամբ, այլ հնարավորությունների բացակայության դեպքում մայթի մեջ գրպանաձև խորացմամբ ավտոկայանատեղերի կազմակերպման դեպքում ապահովել՝



➢ համաքաղաքային նշանակության փողոցների մայթերի բանուկ մասի համար նվազագույնը 2.25-3.0 մ լայնություն,

➢ շրջանային նշանակության փողոցների փողոցների մայթերի բանուկ մասի համար 1.5 մ լայնություն:

Խաչմերուկ մտնող փողոցների բեռնվածության մակարդակը 0.4-0.8 հասնելու դեպքում երթևեկությունը կարգավորել լուսակիրների միջոցով (տեղադրումը՝ գործող նորմերին համապատասխան):

Փողոցների երկայնական թեքություններն ընդունվում են՝ կախված հաշվարկային արագություններից.



Տրանսպորտի միջոցների կանգառները պետք է տեղավորվեն, որպես կանոն, միասնական նախագծով թեթև կոնստրուկցիաներից կառուցված, թափանցիկ պատերով կամ սյուներով շինությունների մեջ, կահավորված լինեն նստարաններով և արհեստական լուսավորությամբ:

Առավելագույն չափերը՝

- երկարությունը՝ 3.6 մ
- լայնությունը՝ 2.0 մ

3.Լանդշաֆտին,այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

Զբոսայգիները և հետիոտն ուղիները անհրաժեշտ է նախատեսել հետիոտնի մասայական հոսքուղու ուղղությամբ: Զբոսայգու տեղադրությունը, երկարությունը և լայնությունը, ինչպես նաև փողոցի լայնական պրոֆիլում անհրաժեշտ է որոշել հաշվի առնելով փողոցի ճարտարապետահատակագծային լուծումները և նրա կառուցապատումները: Զբոսայգիներում և հետիոտն ուղիներում անհրաժեշտ է նախատեսել հրապարակներ կարճատև հանգստի համար:

Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները պետք է լինեն բարեկարգված և կահավորված փոքր ճարտարապետական ձևերով. շատրվաններով և ջրավազաններով, աստիճաններով, թեքահարթակներով, հենապատերով, շվաքարաններով, լուսարձակներով և այլն: Լուսարձակների քանակությունը վորոշվում է տարածքի լուսավորության նորմաներով:

Լանդշաֆատա- ռեկրացիոն գոտիներում ճանապարհային ցանցի ուղեգծումը անհրաժեշտ է իրականացնել հնարավորինս փոքր թեքություններով հետիոտնի տեղաշարժի հիմնական ուղղությանը համապատասխան և հաշվի առնելով սպորտ հրապարակների և խաղահրապարակների ամենափոքր հեռավորությունը: քայլուղու լայնությունը պետք է 0.75 մետրի պատիկ լինի (մեկ մարդու երթևեկության գոտու լայնությունը):

Լանդշաֆատա- ռեկրացիոն գոտիներում ճանապարհ-արահետային ցանցի մակերևույթի ծածկույթը անհրաժեշտ է իրականացնել սալիկներով, խճով և ուրիշ ամուր հանքային նյութերով, թույլ տալով ասֆալտբետոնե ծածկույթի օգտագործումը հատուկ դեպքերում:

Շենքերից, շինություններից, ինչպես նաև ինժիներական օբեկտներից ծառերի և թփուտների միջև հեռավորությունը անհրաժեշտ է պահպանել համաձայն աղյուսակի.

Շենք, շինություն և ինժիներական օբյեկտներ	Հեռավորությունը(մետր) շենքից, շինությունից և ինժ. օբեկտներից մինչև	
	Ծառի բունը	Թփուտներ
Շենքի և շինության արտաքի պատ	5	1,5
Մայթեզր	0,7	0,5
Փողոցի երթևեկելի մասի եզրը, ճանապարհի ամրացված կողնակի կամ ջրհավաք առվի եզրը	2	1
Լուսավորության ցանցի հենասյուներ, կամրջայի հենարան, էստակադ	4	-
Շեպի, պատշգամբի ստորոտ	1	0,5
Հենապատի ստորոտ	3	1
Ստորգետնյա ցանցեր		
Գազամուղ, կոյուղի	1,5	-
Ջեռուցման ցանց	2	1
Ջրամատակարարման խողովակ, դրենաժ	2	-
Հոսանքի մալուխ և կապի մալուխ	2	0,7

Ծանոթություն. Աղյուսակում ներկայացված ցուցանիշները վերաբերվում են ծառերին՝ որոնց սաղարթի տրամագիծը չի գերազանցում 5 մետրը և պետք է ավելացվեն ավելի մեծ սաղարթի տրամագիծ ունեցող ծառերի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2018թվական N 32-Ն

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով , <<Բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով , համայնքի ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն Թալին համայնքի ղեկավար Ս. Արամյանի հաղորդումը համայնքի բյուջեի 2018թ. երկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին , համաձայն կից հավելվածի :

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ – 0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4.Գրիգորյան Աշոտ

5.Գևորգյան Թամարա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին

30 հուլիսի 2018թ

ՀԱՎԵԼՎԱԾ

Թալին համայնքի ավագանու
հուլիսի **30** -ի թիվ **32** – Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. 1-ին կիսամյակի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման

N	Եկամուտների անվանումը	Տարեկան պլան	1-ին կիսամյակի պլան	Փաստացի	%	2-րդ եռամսյակի պլան	Փաստացի	%
1	Գույքահարկ	20500.0	10250.0	7042.2	68.7	2125.0	3692.7	173.8
2	Հողի հարկ	6600,0	3300.0	2433.4	73,7	1650.0	1411.6	85.5
3	Պետ.տուրք	5000,0	2500.0	2622.0	104,9	1250.0	1240.5	99.2
4	Տեղ. տուրք	4270,0	2135.0	2175,2	101,9	1067.5	1010.9	94.7
5	Այլ եկամուտներ	33048,6	16524.3	16357.1	98.9	8262.1	8651.6	104.7
5.1	Հողի վարձակալություն	1100,0	550.0	310.2	56.4	275.0	161.1	58.5
5.2	Գույքի վարձակալություն	3236,0	1618.0	1822.3	112.6	809.0	1280.5	158.2
5.3	Պետ. կողմից պատվիր. լիազ.	5357.1	2678.6	1517.0	56.6	1339.3	446.2	33.3
5.4	Տեղ. Վճար	17291.0	8645.5	11866.1	137.2	4322.7	6660.4	154.1
.5.5	Այլ եկամուտներ	6064,5	3032.2	841.5	27,7	1516.1	103.4	6.8
6	Դոտացիա	80032,9	40016.5	40016.50	100.0	20008.2	20008.3	100
6.1	Այլ դոտացիա							
6.2	Սուբվենցիա	3500,6	1750.3	1435.2	82.0	875.1	875.1	100
	Ընդամենը եկամուտներ	152952.1	76476.0	72081.6	94.2	38238	36891	96.5
7	Ընդամենը ծախսեր	152952.1	76476.0	70680.9	92.4	38238	39832	104.2
7.1	Կառ. ապարատ	35050.0	17525.0	14216.6	81.1	8762.5	7575.3	86.4
7.2	Ընդհանուր բնույթի ծառայություններ	5527.1	2763.5	2264.4	81.9	1381.8	1311.3	94.9
7.3	Այլ ծառայություններ	112375.0	56187.5	54199.9	96.5	28093.7	30945.6	110.1

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ – 0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4.Գրիգորյան Աշոտ

5.Գևորգյան Թամարա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին

30 հուլիսի 2018թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2018թվական N 33-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.08.2016թ. <<ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> N 36-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով , 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով , և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին որոշում է՝

Թալին համայնքի ավագանու 12.08.2018թ. <<Թալինի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին >> N 36-Ա որոշման 1-ին կետում << Հովհաննիսյան Սվետլանա >> բառերը փոխարինել << Հարությունյան Անի >> բառերով :

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ – 0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4.Գրիգորյան Աշոտ

5.Գևորգյան Թամարա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին

30 հուլիսի 2018թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2018թվական N 34-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.08.2016թ. <<ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ , ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >>N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով , 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին որոշում է՝

Թալին համայնքի ավագանու 12.08.2016թ. <<Թալին համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների քանակը , անվանումը և կազմը հաստատելու մասին >> N 26-Ա որոշման 2-րդ կետում <<Աննա Աբրահամյան >>բառերը փոխարինել <<Տաթևիկ Ղազարյան >> բառերով :

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ – 0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4.Գրիգորյան Աշոտ

5.Գևորգյան Թամարա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին

30 հուլիսի 2018թ